ԺԳ

ՍԵԼՈՎԱՄԻ ԱՒԱԶԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՄՕՏ ԳՏՆՈՒՈՂ ՎԱՆՔԵՐԸ

1. Սելովամ բառին բացատրութիւնը.

Հին Կտակարանի յունարէն թարգմանութեան և Նոր Կտակարանի համաձայն, Սելովամը կը կոչուի երբայեցերէն Has-Siloah *և* Siloah, *որ անունն է աղբիւրի մը, ջրանցքի մը և աւազանի մը և այն տեղին որ կը գտնուի Երուսաղէմի հարաւը, Թրէբէոնի հովտին մէջ, Ոփալի, Մորիայի և Սիոնի լերան միջև, մօտ այն տեղին, ուր Կեդրոնը կը միանայ Եննոմի Ձորին։ Աւետարանչին կողմէն (Յովհ. Թ. 7) աւելցուած որ թարգմանի առաքեալ մեկնութիւնը կը հաստատէ թէ պատմական և աւանդական պարագայի մը համաձայն, նոյն բառը կ'արտասանուի* h *ով և կ'ածանցուի* salah *արմատով, որ կը նշանակէ ղրկուած հր. յունական նոյն բառին և արտասանուած գիրը գործածուած է քաղցրաձայնութեան համար, եւ* Siloan *ձեւը Արաբները առած են Բիւզանդացիներէն։ Մեկնիչներուն մեծագոյն մասը այս մեկնաբանութեան մէջ կ'ուզեն տեսնել Աւետարանչին մտադրութիւնը մարգարէական և խորհրդական իմաստով մը կապելու այս անունը իր կողմէն պատմուելիք դէպքի մը։ Նոյն բառը տառապէս հոսումն (ջրոյ) նշանակելով՝ համազօր է ջրանցքի և ջրմուղի, եւ այս անունը տրուած է անոնց ա՛յն ժամանակ՝ երբ անոնք չինուած էին աղբիւրին ջուրը ղրկող թագաւորաց պարտէզները ոռոգելու կամ աւազանը լեցնելու։ Ջրմուղին անունը յետոյ տարածուած է աղբիւրին, աւազանին և տեղին վրայ։*

1.— Սելովամի աղբիւրը.— Ընդհանուր ասացուածքով կը հասկցուի Սելովամի ջուրը. Եսայիի Ը. 6 համարին համաձայն, միեւնոյն ժամանակ կը նշանակէ Սելովամի ջուրերուն ընթացքը։ Մարգարէն «զջուրն Սելովայ որ գնայ խաղաղ» ըսելով կ'ուզէ հասկցնել Դաւթի տան պատկերը. իսկ «զջուր գետոյն զհզօրն